Զարիս խորաթողին,
Բարի տաս.
Բարիս խորաթողին,
Արքայութիւն տաս:

Մաղթանք պաշտպանութեան:

Թաժա հացի ֆէդ (հոտ) կու գայ,
Ելէք նէյէցէք ո՞վ կու գայ:
Երեք ձիաւոր մարդ կու գայ
Պօղոս, Պետրոս, սուրբ Ստեփանոս.
Փիլոննիդ յերթիցս ծածկոց ըլլա,
Գաւազաննիդ դռանս գոց ըլլա·
Դուռս եկողը քար կըլլի,
Էրթիքս եկողը երկաթ կըլլի:

Ձեռքը կեռացած ատեն:
Մաղիս հատովը
Ճանկս լեցընես:

17· Փոքրիկ տղայք երբ բարտի ճիւղին կեղեւը կը հանեն սուլիչ ընելու համար՝ հետեւեալ քառեակը կը կրկնեն, մինչդեռ դայն կը թուլցնեն կամաց մը ծեծելով·

Պօռու պօռու պոռեստան,
Մատդ դնեմ մատնեստան:
Իմ չես, քուկ չես,
Քօր սատանայի՛ն ես:

Հաւաքեց Յ· Գ· ՄՈՍԿՕՓԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՆԹԷՈՆՆԵՐՈՒՄ

1· ԽՕՋԻՎԱՆՔԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

Տեսա՞լ էք Խօջիվանքը:

Բարձրացէք Թիֆլիսի Հալաբարը եւ Ռօզավաեայի հրապարակով մտէք Խօջիվանքի փողոցը: Ահա այդտեղ է պատմական մեծ պանթէոնը:

Հազարաւոր կրանիտէ տապանաքարեր, մարմարէ արձաններ եւ կոթողներ՝ տարբեր երանգներով ու տիպերով կերտուած, երկաթէ գեղեցիկ վանդակապատներով ու ծառերով զարդարուած, գրաւում են ձեր ուշադրութիւնը եւ համակում ձեզ ծանր ու խոր թախիծով···:

Հազարաւոր կարճ, բայց յուզիչ արձանագրութիւններ, թախծոտ բանաստեղծութիւններ ու քառեակներ, անպաճոյճ յիշատակագրեր եւ համբ թուականներ խօսում են ձեր սրտի, ձեր զգացումների հետ, յուզում, ալեկոծում ձեր հոգեկան աշխարհը: Ամէն մի շիրիմ, ամէն մի կոթող, ամէն մի արձան ունի իր յուզիչ պատմութիւնը, իր դրամատան, իր ողբերգութիւնը:

Ո՛րքան պայծառ, լուսաւոր դէմքեր նկատւում են ձեր աչքերի առաջ, ո՛րքան ազիզ սրտեր պատկերանում:

Այդ պանթէոնում են հանգչում հայ դրականութեան, արուեստի, կուլտուրական յեղափոխութեան, քաղաքական վերածնութեան բազմաթիւ մշակները—խմբագիրները, հրապարակախօսներ, օպէտներ, երաժիշտներ, նկարիչներ, քանդակագործներ, ճարտարապետներ, դերասաններ, վիպագիրներ, պատմաբաններ, որոնք կերտել են տարբեր դարաշրջանների պատմութիւնը, արծարծել նոր գաղափարներ, ծածանել նոր դրօշներ եւ հարթել են նոր ուղիներ: Պայքարել են նրանք ժամանակի կուլտուրական յետամնացութեան, կենցաղային սնոտիապաշտութիւնների, ճնշումների դէմ եւ ժողովրդի տարբեր խաւերին առաջնորդել դէպի լուսաւորութիւն, դէպի կուլտուրա եւ գիտութիւն: Այդ վեհ իդէալների իրագործման համար պայքարել են նրանք վճռական կամքով, անվկանդ տոկունութեամբ եւ նուաճելով բազմաթիւ խոչընդոտներ, քայլել են յաղթանակից յաղթանակ: Նրանցից շատերն ընկել են պայքարի հէնց կէս ճանապարհին, շատերը՝ բարձունքների վրայ···:

Այսօր չկան այդ լուսաւոր, պայծառ դէմքերը· նրանք յաւիտեան բաժանուել են մեզնից, թողնելով միայն իրենց գործերն ու շիրիմները: Նրանց յիշատակի ամենավերջին կոթողներն են այդ շիրիմները, որոնց վրայ քանդակած են նրանցից շատերի վերջին կտակները, վերջին խօսքերը···:

Կանգ եմ առնում իւրաքանչիւր տապանաքարի, իւրաքանչիւր արձանի առաջ եւ կարդում մէկը միւսից աւելի յուզիչ, մէկը միւսից աւելի թախծոտ արձանագրութիւնները, որոնք պատմում են ամէն մէկի կեանքը, գծագրում ամէն մէկի պատկերը:

Բայց միայն Խօջիվա՞նքը: Անցէ՛ք Վերայի գերեզմանատունը, շրջէ՛ք Վանքի մայր-եկեղեցին, մտէ՛ք Ս· Գէորգի եւ Կուկիայի գերեզմանատները: Քանի՞ քանի՞ վշտաբեկ, թախծոտ թափօրներ համախմբուել են այդ

պանթէոններում եւ հողին յանձնել աննման, ազիզ սրտեր, թանկագին տաղանդներ:

Մի խոր եւ ծանր թախիծ յուզում, թախծում է սիրտս: Նրանցից շատերը հանգչում են հողի մէջ առանց յուշարձանների, առանց տապանաքարերի: Շատերի գերեզմանների թումբերը հարթուել, հաւասարուել են հողին եւ անհետ կորել: Ո՞վ կարող է ցոյց տալ գերասաններ Միհրդատ Ամերիկեանի, Թուրեանի շիրիմները, ո՞վ կարող է մատնանշել նկարիչ Ներսիսեանի հողաթումբը· թերեւս փորել են նրանց գերեզմանները եւ նորերը թաղել: Ո՞վ գիտէ գայ մի օր, որ անյայտանան դեռ շատ թանկագին շիրիմներ եւ արձանագրութիւններ: Անհրաժեշտ է փրկել ժամանակի կլանող ժանիքներից: Ահա այդ գիտակցութեամբ ամէն մի յիշատակագիր, ամէն մի թուական պոկելով արձանների, տապանաքարերի եւ կոթողների վրայից, յանձնում ենք գրականութեան պատմութեան:

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ
(1845—1892)

Միայն երկու անուն — Գրիգոր Արծրունի եւ «Մշակ»: 70—80ական թուականների հայ հրապարակախօսութիւնը եւ գրական—կուլտուրական կեանքը մեծ մասամբ կապուած են այդ երկու անունների հետ:

«Մշակ» եւ Արծրունի — դար անողոք, վճռական եւ համարձակ մի պատերազմ է պատմաշրջանի խաւարի, անշարժութեան, թմրութեան եւ անկուլտուրականութեան դէմ, մարտական մի պայքար է հին սերնդի գաղափարախօսութեան դէմ: Դա մի կոչ է դէպի լուսաւորութիւն, ինքնաճանաչութիւն եւ ինքնագիտակցութիւն: Դա մի նոր դրօշ է՝ կրակոտ բնաբաններով: «Հիւսիսափայլ»ի յառաջադիմական պայքարի շարունակութիւնն է այդ պայքարը: Ահա թէ ինչու Արծրունու անունն առանձնայատուկ տեղ է գրաւում հայ լրագրութեան եւ հրապարակախօսութեան պատմութեան մէջ:

*

1892 թուականի Դեկտ· 19ին ընկաւ դարաշրջանի տաղանդաւոր այս հրապարակախօսը, ընկաւ 20 տարուայ անողոք եւ վճռական պայքարից յետոյ: Նրա յանկարծակի մահը խոր վշտով համակեց հայ հասարակութեան բոլոր խաւերին: Մօտ 400 ցաւակցութեան բոլոր խաւերին: Մօտ 400 ցաւակցութեան հեռագիրներ ստացուեցին ամէն կողմից — Անդրկովկասից, Ռուսաստանից եւ արտասահմանից:

Դեկտեմբեր 27ին Թիֆլիսի հասարակութիւնը կատարեց նրա թաղումը՝ մեծ շքով: Նրա դագաղը քաշում էին եօթը դիակառք եւ հետեւում մի քանի տասնեակ հազարաւոր յուզարկաւորներ:

*

Ուղիղ տասը տարի անց, 1902 թ· Դեկտեմբեր 22ին, կիրակի, նրա մահուան տասնամեակին, հայ հասարակութիւնն իր սիրելի մշակի հողակոյտի վրայ կանգնեցրեց մի յուշարձան:

Կանգնած արձանի առաջ համակուած ծանր եւ թախծոտ զգացումներով, դիտում եմ տաղանդաւոր հրապարակախօսի վերջին կոթողը: Դա միապաղաղ, անարուեստ ժայռի մի կտոր է, ինչպէս ինքը, երկաթէ կամքի տէր, մարտնչող կրակոտ հրապարակագիրը: Ներքեւում հանգչում է նոյն ժայռից յղկուած, մոդ մարմարիոնի նման փայլող հաստ պատուանդանը, որի հարաւային ճակատին փորագրուած է·

1845—1892

Այդ յամբ թուերը պատմում են ձեզ Արծրունու ծննդեան եւ մահուան մասին:

Ժայռի կրծքին, յղկուած փոքրիկ մի տարածութեան վրայ, կարդում եմ ոսկեզօծ տառերով փորագրուած խմբագրի ստորագրութիւնը·

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Այդ ստորագրութիւնն են կրել նրա այնքան վարպետ գրչով գրուած առաջնորդները, որոնք բնորոշ են իրենց պարզ եւ կորուկ վերնագրերով· «Երէկ, այսօր, էգուց», «Դուք եւ մենք», «Ո՞ւմն ենք խաբում», «Մենք ձեզ կը մերկացնենք»:

Ի՞նչ է ներկայացնում ապառաժէ կոթողն իր կառուցուածքով եւ բովանդակութեամբ: Դա 20 տարուայ հերոսական աշխատանքի, պայքարի եւ յաղթանակի սիմբոլն է: Մահարձանի նկարը գծագրել է նկարիչ Գէորգ Բաշինջաղեանը, որին Արծրունին այսպէս է կտակել իր կամքը:

«Ես կ'ուզէի, որ գերեզմանիս վրայ դրած լինէր պարզ ժայռի կտոր եւ նրա վրայ կարդացուէր սոսկ ազգանունս»:

Եւ ժամանակի ինտելիգենցիան իրագործեց հրապարակախօսի վերջին կտակը:

© National Library of Armenia

ՊՐՕՖԷՍՕՐ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ
(1847—1898)

Գրիգոր Արծրունու չիրմի մօտ հանգչում է նրա կրտսեր եղբայրը՝ Անդրէաս Արծրունի, որ երկար տարիներ պաշտօնավարեց Գերմանիայում իբրեւ հանքաբանութեան ուսուցչապետ Բրէսլաւի եւ Ախէնի համալսարաններում։ 1898 թուի Սեպտեմբերին թոքախտը վերջ դրեց այս գիտնականի կեանքին։

Հողակոյտի վրայ դրուած է սեւ փայլուն մարմարից կերտուած մի յուշարձան։ Քառակուսի ստելով եւ ֆորմաներով քանդակուած գեղեցիկ մի կոթող է դա, որ վերջանում է սեւ փայլուն եւ քառակուսի մարմարէ բարձր մի սիւնով։ Պատուանդանի հարաւային ճակատին փորագրուած է.

ՊՐՕՖԷՍՕՐ
ԱՆԴՐԷԱՍ
ԱՐԾՐՈՒՆԻ

PROFESSEUR
ANDREAS
ARTZROUNI
1847—1898

ԱԼԷՔՍԱՆԹՐ ՔԱԼԱՆԹԱՐ
(1855—1913)

Գրիգոր Արծրունու մահից մի տարի անց Քալանթարն իր ձեռքն առաւ «Մշակ» թերթի խմբագրութեան գրօշը եւ պատուով ծառայեց իր կոչմանը, ճիշդ է, նա չունէր Գրիգոր Արծրունու գրչի թափն ու աւիւնը, բայց օժտուած էր իր ժամանակի հրապարակախօսի լաւագոյն յատկութիւններով։ Ամբողջ քսան տարի Արծրունու ծրագրով եւ ուղղութեամբ հրատարակեց «Մշակ»ը, աշխատելով վերլուծել հասարակական կեանքում երեւան եկող նոր խնդիրներն ու երեւոյթները։

Նրա «Սիրող» ստորագրութեամբ թատրոնական տէնդէնցիաները եւ «Վրթին» կեղծանունով երգիծական յօդուածները եւ դիւզամտեսական լուրջ ուսումնասիրութիւնները զարգարում են նոյն շրջանի «Մշակ»ի էջերը։

*

1913 թուին, Բաֆֆու մահարձանի բացման օրը, սգոյ ճառ արտասանելու համար պատրաստուելիս՝ յանկարծ կորուեց նրա կեանքի թելը։

Անդրէաս Արծրունու չիրմի մօտ բարձրանում է Գեղարուեստական աքանչելի մի կոթող։ Դա Քալանթարի մահարձանն է։ Երկնագոյն մարմարից կերտուած քառակուսի մի պատուանդան բազմել է հողի կրծքին։ Վրան իշխում է ծաղկահիւս, սիւնազարդ քառակուսի մի երկրորդ պատուանդան, որի վրայ քանդակուած խաղողի ողկոյզների, ցորենի հասկի եւ մանգաղի մէջ կարդում են.

ԱԼԷՔՍԱՆԹՐ
ՔԱԼԱՆԹԱՐ
1855—1913

Պատուանդանի վրայ յաղթական իշխում է մարմարից կերտուած կլոր եւ բարձր գեղեցիկ մի սիւն։

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ
(1855—1918)

«Մշակ» լրագրի խմբագիր, հրապարակախօս եւ հասարակական գործիչ, որի ամբողջ հասարակական-քաղաքական գործունէութեան եւ հրապարակախօսութեան հիմնական գիծը, գլխաւոր լօզունգն էր — հայ ժողովրդի կրթութիւնը։ Կուլտուրական յեղափոխութեան միջոցով լուսաւորել, յեղաշրջել այդ ժողովրդին եւ դնել նրան եւրոպական առաջադէմ ազգութիւնների շարքը։ Դա Գրիգոր Արծրունու դաւանանքն էր, 60ական եւ 70ական թուականների հայ ինտելիգէնցիայի գրօշակը։ Դա միաժամանակ գրօշն էր Հայ ժողովրդական կուսակցութեան, որի պարագլուխներից մէկն էր Հ. Առաքելեանը։ Ահա թէ ինչու 1913 թուից, Ա. Քալանթարի մահից յետոյ, երբ նա մնաց «Մշակ» թերթի միակ խմբագիր-հրատարակիչը, սկսեց ծաւալել կատաղի, անհաշտ պայքար քաղաքական բոլոր կուսակցութիւնների դէմ։ Պայքարեց նա ամբողջ 40 երկար տարիներ՝ հայ ժողովրդի ազատագրութեան ճշմարիտ եւ միակ ուղին համարելով կուլտուրական-տնտեսական զարգացումը։ 40 տարի շարունակ նա «Մշակ»ի էջերում արտայայտիչ հանդիսացաւ իր կուսակցութեան դաւանանքներին։ Այդ ճանապարհին էլ նա ընկաւ։

*

Առաքելեանը թողել է նաեւ գրական վաստակներ։ Ո՞վ չի յիշում նրա պարբերականի կեանքից վերցրած «Զհուդ. Քուշան» մեծ վէպը՝ Շահիրիար անունով։ Հայ գրականութեան համար մեծ արժէք ունի նրա 1916 թուին հրատարակած «Հանրագիտական բառարանը»։ Հետաքրքիր է նաեւ «Մի ամիս արեւելքում» ճանապարհորդական տպաւորութիւնները։ 1910—1913 թ. նա խմբագրեց «Արօր» գրական-գիտական ամսագիրը, իսկ 1913—1918 թուականը՝ «Մշակ»ը։

*

1918 թուի Յուլիսի 6ին, երեկոյեան, ժամը 8ին, սպանուեց իր բնակարանում, 63 տարեկան հասակում։

Հանգչում է իր ուսուցից Գրիգոր Արծրունու չիրմի մօտ։ Վրան ոչ տապանաքար կայ, ոչ էլ արձանագրութիւն։

ԿԱՐԱ-ԴԱՐԻՒՇ
ՅԱԿՈԲ ԳԵԱՆՋԵԱՆ
(1872—1930)

Առաջին հայ ֆուտուրիստը։ Այդ դրօշն էլ նա բարձր պահեց մինչեւ իր մահը։ Նրա գրական աւանդներն են. «Երուանդ Գօշ», «Ջուրքակ» եւ «Օրերից առաջ»։

Գրիգոր Արծրունու չիրմի մօտ իշխում է երկնագոյն, եռանկիւնի ստելով կերտուած մարմարէ փոքրիկ մի քար, որի կրծքին դրօշմուած սպիտակ քառակուսի մարմարի վրայ կարդում եմ սեւ տառերով փորագրուած հետեւեալ վեց տողերը.

ԵՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑԻՆ ՔԱՂԱՔԱՑԻ ԵՄ
ԱՇԽԱՐՀՆ Է ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ
ԵՍ ՄԱՐԴ ԵՄ ԵՒ ՄԱՐԴՆ Է ԻՄ
ԸՆԿԵՐ-ԱԶԳԱԿԻՑԸ
ԿԱՐԱ-ԴԱՐՎԻՇ
1872—1930 16/XII

Այդ կարճ տողերն էլ բնորոշած են Կարա-Դարուիշի ողջ աշխարհայեացքը։

ՄԱԿԱԼ ԵԿՄԱԼԵԱՆ
(1857—1905)

«Պատարագը» — ահա այն մեծ արձանը, որ կերտել է Եկմալեանը։ Նա ունի նաեւ ժողովրդական-ազգային մօտիւներ։ Ո՞վ չի երգել նրա «Ո՛վ դու բարեկամը», «Ազնիւ ընկեր մեռանում եմ», «Տէր, կեցո դու զհայս» կամ «Ոչ փող զարկինք, ոչ արձագանք»ը, «Կապոյտ երկնքում աստղեր են փայլում»։

Եկմալեանի երաժշտական-կուլտուրական բարձր արժէքն ընդգծել են ոչ միայն հայ, այլ եւ օտար յայտնի երաժշտագէտները։ Նրա պատարագի մասին գովասանքով են խօսել աշխարհահռչակ Վերդին, Սենսանսը, Դիւկոզրէին, Բերլինի եւ Լոնդոնի երաժշտական ընկերութիւնները։ Նրա տաղանդի առջեւ խոնարհուել է անգամ Կարա-Մուրզան։ Նրա մեծութիւնն արձանագրել է յայտնի երաժշտագէտ Ռոմանոս Մելիքեանը — «Նա չի՛ մեռել եւ չի էլ կարող մեռնել, նա կենդանի է, նա ապրում է այն հմայիչ ձայների եթերում, որ մեզ թողել է ժառանգութիւն»։

Եկմալեանի երաժշտական խորութիւնը նրա «Պատարագի» մէջ է։ Դա երաժշտական մի լուրջ ստեղծագործութիւն է, որի մէջ հարազատութեամբ պահպանուած է հայկական եղանակների բուն ոգին, հայ երգի ոճը։ Այդ կուլտուրայով Եկմալեանը «լուծում է արեւելեան եղանակների վերաբերմամբ ներդաշնակած ամենաբարդ խնդիրները»։

*

Խոջիվանքում, Գրիգոր Արծրունու չիրմի մօտ, կանգնած է Եկմալեանի մահարձանը։

Պարզ, բայց գեղեցիկ մի կոթող է եւս, որ իր ամբողջութեամբ խոր տպաւորութիւն է գործում եւ համակում անցեալի քաղցր յուշերով։

Ներքեւում հանգչում է մութ-թխագոյն յղկուած քառակուսի պարզ եւ անպաճոյճ փոքրիկ մի քար։ Դա պատուանդանն է։ Վրան կանգնել է 2½ մետր բարձրութեամբ մութ-թխագոյն կլոր կրանիտէ մի սիւն, որի կրծքին փորագրուած նօտաների ներքոյ կարդում եմ երաժշտագէտի ստեղծագործութիւնից մի տող.

ՈՒ ՉԵՐԳԵՑԻՆՔ ՈՂԲՈՑ ԵՐԳԵՐ

Ապա սեւ տառերով փորագրուած է միայն հինգ տող.

ԵՐԱԺՇՏԱԳԷՏ
Մ. ԵԿՄԱԼԵԱՆ
† 1905

КОМПОЗИТОР
М. ЭКМАЛЯН

Ցուղարկաւորութիւնը եւ թաղումը։ Մարտի 12ին, չարաթ երեկոյեան, Հալաբարում կատարուեց անբախտ երաժշտագէտ Եկմալեանի հոգեհանդիսատը։ Դագաղը շատ փոքրամ՝ տրոպիկական տունկերով եւ կանաչներով էր շրջապատուած։ Կային մի քանի պսակներ՝ կոյսեր. երաժշտական Թիֆլիսի ուսումնարանից («Տաղանդաւոր երաժշտագէտին»)։ Տէր-Դաւթեանի մասնաւոր երաժշտագէտ ուսումնարանից («Մեծ երաժիշտագէտին») եւ այլն... Հոգեհանդիսատին ներկայ էին հայերից Ներսիսեան դպրոցի աշակերտները իրենց տնօրէն եւ մի երկու վարժապետի հետ։ Հայ գրականագէտներից (բացի Գ. Գ. Նար-Դոսից եւ Իս. Յարութիւնեանից) ոչ ոք։ Հայ խմբագիրներից (բացի «Ազ-

© National Library of Armenia

բիւբ–Տարազի» խմբագրից) ոչ ոք: Ներկայ էր դաշնակահար Տէր–Դաւթեանը:

Հետեւեալ առաւօտ յուղարկաւորութեան միւնոյն անձնաւորութիւններն էին եւ երկու ուսուցիչ Ներսիսեան դպրոցից: Վարանցովի արձանի մօտից բաղմութիւն սկսեց ստուարանալ: Վանքի տաճարը եւ բակը լիքն էր ժողովրդով: Եկեղեցուց Եկմալեանի դագաղը դուրս բերին եւ համարեա անընդհատ ցցեցերով, ճառերով տարան նախ Ներսիսեան դպրոցի առաջ, ուր կանգ առին, հոգեհանգիստ կատարեցին եւ ապա անհամար բազմութիւնից բաղկացած թափօրը շարունակեց ուղին: Խօջիվանքի գերեզմանատանը Եկմալեանի մարմինը սեւ հողին յանձնեցին: Խօսեցին շատ դամբանականներ: Վերջին անգամ երգուեց Հայր մերը:

ԵՐԱԺՇՏԱԳԵՏ ԳԵՆԱՐԻՈՍ ՂՈՐՂԱՆԵԱՆ
(1858—1890)

Հայ երաժշտութեան պատմագիրն, անկասկած, պիտի յիշատակի այս արուեստագէտին, որն իր ժամանակի հայ երաժշտութեան զարգացման գործում որոշ դեր է կատարել:

*

Թաղուած է «Մշակ»ի պանթէոնին կից: Վրան դրուած է կրանիտէ մի կոթող, որի ճակատին կարդում եմ հետեւեալ պարզ տողերը·

ԳԵՆԱՐԻՈՍ
ՅՈՎՍԷՓԵԱՆ
ՂՈՐՂԱՆԵԱՆՑ
1855—1890 Թ·

Մահարձանի ծայրին իշխում է մարմարէ մի քնար:

ՔԵԱՄԱՆՉԻՍՏ ՍԱՇԱ ՕՎԱՆԵՋԱՇԻՒԼԻ
(1889—1932)

Լսե՞լ էք դուք երբէք Սաչայի քեամանչէն, նրա նուրբ մատների ներքոյ հնչող դիւթիչ երաժշտութիւնը:

Գրւոխը խոնարհում, աչքերը մեխում լարերին եւ ամբողջ էութեամբ ձուլուելով քեամանչու հետ, շունչ էր տալիս անշունչ լարերին··· Այսպէս էր Սաչան. իր քեամանչու նուրբ եւ լիրիկ հնչիւններով նա խօսում էր ձեր սրտի, ձեր զգացումների հետ: Ապրեցնում ձեզ արեւելքի անուշ, գունագեղ, վառ երանգների աշխարհում: Եւ արեւելքի անմոռան պատկերները գծագրւում էին՝ մէկը միւսից դիւթիչ, մէկը միւսից յուզիչ:

Նուրբ արուեստագէտ էր Սաչան, նուրբ իր զգացումներով, իր ապրումներով:

Ո՞վ կը մոռանար նրա անմոռան, սրտամորմոք Սահարին, որ մի ակնթարթում կախարդում էր բոլորին: Ո՞ւմ սրտում քանդակուած չէ նրա Մեռեալները, որ կրակ էր վառում հազարների սրտերում: Ապա նրա անմոռան Զարգեա՞ին, որ կախարդում էր ամէնքին···:

*

Դեռ երէկ էր, որ Խօջիվանքում, «Մշակ»ի պանթէոնին կից, թաղեցինք Սաչային:

Սեւ ժապաւէնով զարդարուած նրա քեամանչէն տանում էր սգաւոր հայ օրիորդը դագաղի առջեւից, իսկ վշտաբեկ հասարակութիւնը լուռ քայլում նրա երփներանգ ծաղիկներով զարդարուած դագաղի ետեւից:

Սրտամորմոք երաժշտութեան հնչիւնների ներքոյ շատերն էին լալիս:

*

Նրա դագաղի առջեւ վերջին անգամ հնչեցրին քեամանչի յուզիչ լարերը, հնչեցրին թառի սիմերը, երգեցին արեւելեան յուզիչ բայեաթին:

— Սաչա ջան, դու սիրում էիր, որ նուագելիս բոլորը լուռ մնան· հիմա բոլորս էլ լուռ ենք, ընչի՞ չես նուագում, ընչի՞ մարմար մատերդ չեն հնչեցնում քեամանչի լարերը···:

— Գնաս բարով Սաչա, երաժշտութեան պատմութիւնն իր էջերում կ'արձանագրի քո անունը որպէս վարպետ քեամանչիստ, որպէս արեւելեան երաժշտութեան թէօրէտիկ, կ'արձանագրի որ դուն ես աւելացրել քեամանչի 4րդ լարը:

Այսպէս խօսեցին Սաչայի դագաղի առաջ հայ, վրացի, ռուս, թիւրք արուեստագէտները: Եւ քեամանչու թախծոտ երաժշտութեան հնչիւնների տակ նրան իջեցրին գերեզման···:

*

Երաժշտագէտ Մակար Եկմալեանի յուշարձանի մօտ այսօր բարձրացել է մի թարմ հողաթումբ՝ ծաղկեփնջերով եւ ծաղկեպսակներով ծածկուած: Դա Սաչայի շիրիմն է· ոչ արձանագրութիւն ունի, ոչ էլ կոթող:

ՍԱՂԱՆԴԱՐ ԻՎԱՆ ՊԱՒԼԻՉ ԱՂԷՔՍԱՆԴՐԵԱՆ
(1881 Թ·)

Հին Թիֆլիսի լաւագոյն սաղանդարներից մէկը: Վրան դրուած է կրանիտէ պարզ մի քար, որի երեսին քանդակուած է հէնց իրեն՝ Իվանի նկարը, որ հին Թիֆլիսի իսկական տարազը հագին եւ ձեռքերը կրծքին խաչաձեւ դրած՝ կանգնել է իր պարթեւ հասակով: Աղդագրական տեսակէտից տարազն այնքան տիպիկ է եւ բնորոշ, որ նկարիչ Գիքօ Շարբաբչեանը վրձինի նիւթ է դարձրել:

Գերեզմանաքարի կողքին փորագրուած է·

ԱՅՍ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՄԷՋ ԹԱՂՈՒԱԾ Է ՍԱՂԱՆԴԱՐ ԻՎԱՆ ՊԱՒԼԻՉ ԱՂԷՔՍԱՆԴՐԵԱՆԸ· ՎԱԽՃԱՆ· 20 ՅՈՒՆԻՍԻ 1881 Թ· 57 ԱՄԱՅ· ԽՆԴՐԷ ԱՍԵԼ ՈՂՈՐՄԻ:

ՐԱՖՖԻ
(1835—1888)

«Եթէ հայ գրականութեան մէջ կան խոշոր վէպեր, որ ես կարդացել եմ առանց ձանձրոյթի, դա «Վերք Հայաստանի»ից յետոյ միայն եւ միմիայն Ռաֆֆիի գործերն են···»: Նիրվանզադէ:

Այն արձանները, որ քանդակել է Ռաֆֆին իր հատու մուրճով, այն պարզ, գեղեցիկ լեզուն եւ հարուստ ոճը, որոնցով կերտել է իր վէպերը, այն գեղեցիկ նկարները, որ վրձինել է գունագեղ երանգներով, երկար, դեռ շատ երկար պիտի յիշատակեն նրա անունը հայ վիպական գրականութեան պատմութեան մէջ:

Այսօր էլ դեռ, չնորհիւ Ռաֆֆու սահուն ոճի, լեզուի եւ անմոռան նկարագրութիւնների, նրա վէպերը կարդացւում են առանձին յափշտակութեամբ:

Ո՞վ չի կարդացել նրա «Ջալալէդդին»ը, «Խենքը», «Կայծեր»ը, «Խաչագողի յիշատակարանը»: Ո՞վ ծանօթ չէ նրա «Ոսկի աֆաղաղ»ին, «Սամուէլ»ին, «Դաւիթ Բէկ»ին: Գեղեցիկ մի ցուցահանդէս է դա, խայտաբղէտ, գոյնզգոյն եւ բազմերանգ, որն իր ամբողջական կերտուածքով բնորոշում է Ռաֆֆու ռոմանտիկ աշխարհայեացքը, նրա վիպական տաղանդը:

Ահա նրա վարպետ վրձինով կերտած, տարբեր խոհերով, հոգեբանութեամբ եւ իդէալներով համակուած ժամանակաշրջանի տիպերը — Մասիսեանը, քաւոր Պետրոսը, Տէր–Թոդիկը, Թոմաս Էֆէնդին, Դաւիթ ուրացողը:

Ահա եւ նրա գաղափարական, խենթ իդէալներով կրակուած, ռոմանտիկ հերոսները — Սարիատը, որսորդ Աւօն, Վարդանը, Ասլանը, Սաֆօն, Կարօն, Ֆարիատը — որոնք որպէս կենդանի տիպեր շարան–շարան պատկերանում են ձեր աչքերի առջեւ:

Ապա ո՞նց չյիշել Ռաֆֆու վրձինած գեղարուեստական պատկերները, գեղեցիկ բնութեան հարազատ նկարագրութիւնները, որոնք զբսեւորում են նրա նկարչական տաղանդը: Այնտեղ ցոլանում են նաեւ ժողովրդի տարբեր խաւերն իրենց ուրոյն կենցաղով եւ բնորոշ գծերով: Այնտեղ դուք տեսնում էք եւ գիւղացիներն՝ իրբեւ տնտեսական որոշ խաւ:

Այդ բոլոր գեղեցիկ նկարները խօսում են վիպասանի ստեղծագործական տաղանդի եւ մեծութեան մասին:

*

1888 թուին ընկաւ այս տաղանդաւոր արուեստագէտը: Մեծ հանդիսով թաղեցին նրան Խօջիվանքում·

«Ռաֆֆիի թաղումն առաջին համաժողովրդականը եղաւ, գրում է թաղմանը մասնակցող վիպագիր Շիրվանզադէն: Մինչեւ այդ օրը նման համայնական սուգ չէր եղել···: Գրեթէ ամբողջ քաղաքն ոտքի էր եղել: Եկել էին Թիֆլիսի բոլոր համքարութիւնների իրենց գոյնզգոյն մետաքսեայ դրօշակներով: Խմբուել էին տան առջեւ քաղաքի բոլոր դպրոցների հայ աշակերտներն իրենց ուսուցիչների հետ: Ներկայ էր ամբողջ հոգեւորականութիւնը սեւազգուլխ եպիսկոպոսներով ու վարդապետներով: Ներկայ էին բոլոր հայ եւ օտար լրագրերի խմբագրութիւնները, բոլորը, ով որեւէ առնչութիւն ունի գրականութեան կամ մամուլի հետ: Եկել էր հայ բանուոր դասակարգը, թիւրքահայ դաղթականները եւ հազարաւոր տիկիններ, օրիորդներ, չնայելով յորդառատ անձրեւին···: Արծրունին իր հակառակորդների՝ Աբգար Յովհաննիսեանի, Գնարոս Սիմոնեանցի ու Սպանդարեանի հետ Ռաֆֆիի դագաղը բնակարանից դուրս բերողներից մէկն էր:

Դագաղը մինչեւ եկեղեցի ու այնտեղից մինչեւ Խօջիվանքի գերեզմանատուն տարուեց ուսերի վրայ»:

*

1913 թուին Թիֆլիսի առաջադէմ հայ ինտելիգէնցիան նրա հողակոյտի վրայ կանգնեցրեց մի յուշարձան: Խօջիվանքի գերեզմանատանը հարաւային պատի վերեւի մասում կանգնած է այդ կոթողը:

Ներքեւում հանդիսում է քառակուսի թխադոյն կրանիտից յղկուած մի քար: Դա պատուանդանն է: Վրան իշխում է մի ամբողջական սպիտակ մարմար քարից կերտուած, քառակուսի, գեղեցիկ ֆորմաներով քանդակուած, մօտ երկու մետր բարձրութեամբ, մի հաստ պատուանդան, որի հիւսիսային ճակատին կարդում եմ հետեւեալ տողերը·

ՔԱՐ Է ՔՈ ՍԻՐՏԸ ԵՒ ԽԻՂՃ Է ՄԵՌԱԾ
ՔԱՆԻ՞ ԱՐԻՒՆՆԵՐ, ՔԱՆԻ՞ ԿՈՏՈՐԱԾ
ՏԵՍԱՐ ԼՌՆՑԻՐ ԵՒ ԴԱՐՁԵԱԼ ՊԱՑԾԱՌ
ՀԱՑ ԵՐԿՐԻ ՎԵՐԱՑ ԿԱՊՈՒՄ ԵՍ ԿԱՄԱՐ:

Յ· Մ· Յակոբեան:

© National Library of Armenia

Մարմարէ պատուանդանի վրայ բարձրանում է սպիտակ մարմար քարէ փոքրիկ քառանկիւնաձեւ մի պատուանդան, որի հիւսիսային ճակատին փորագրուած մարմարէ ծաղկեպսակի մէջ ձուաձեւ քանդակուած է.

ՐԱՖՖԻ

Ներքեւում սեւ տառերով փորագրուած

1888

Դա Ռաֆֆու մահուան թուականն է:

Երրորդ պատուանդանի վրայ բարձրանում է մարմարէ կլոր մի սիւն, որի ծաղկահիւս կատարին, յաղթական իշխում է մարմարէ դեղեցիկ մի քնար:

Նայում եմ այդ քնարին, որի եռեւից ահա գծագրւում է վիպասանի թուխ դէմքն՝ իր լայն ճակատով, սեւ մօրուքով եւ բանաստեղծական մազերով: Սեւ ակնոցների տակից անուշ ժպտում են նրա խոսուն աչքերը...:

ՄՈՒՐԱՑԱՆ (ԵՐԻԳՈՐ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ)

(1854 – 1908)

1908 թուի Օգոստոսի 30ին Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցի հոգեկան հիւանդների բաժանմունքում երկամսեայ տանջանքից յետոյ ընդմիշտ փակեց իր աչքերը յայտնի հայ վիպասան Մուրացանը:

Նա հանդիսացաւ իր ժամանակի հասարակական կեանքի ընորոշ երեւոյթները վրձինող լաւագոյն գեղարուեստագէտը: Ո՞ր գրականասէրը չի կարդացել նրա վարպետ վրձինով նկարած պատմուածքները, պատկերներն ու վիպակները — «Ռուզանը» (պատմական եղերերգութիւն), «Գէորգ Մարզպետունին», «Իմ կաթոլիկ հարսնացուն», «Անպատեհ իշխանուհի», «Զրհաս է», «Խորհրդաւոր միանձնուհին», «Նոյի ագռաւը», «Առաքեալը», «Անդրէաս երէցը», «Պսակների բոզերը», «Յպահանչ», «Հայ բողոքականի ընտանիքը», «Գրուբեան քոյրեր», որոնք այսօր էլ դեռ կարդացւում են հետաքրքրութեամբ եւ ընդգծում Մուրացանի ստեղծագործական խոշոր ձիրքը:

*

Հանդիսանում է Խոջիվանքի գերեզմանատանը, ուր հողակոյտի վրայ չկայ ոչ մի յիշատակագիր:

ՄԱՄԲՐԷ ՄԱՏԷՈՍԵԱՆ

Ռաֆֆու յուշարձանի մօտ ուշադրութիւնս գրաւում է անտաշ եւ անպաճոյճ մի քար, որի վրայ կարդում եմ միայն երկու բառ.

ՄԱՄԲՐԷ
ՄԱՏԷՈՍԵԱՆ

Ծաղիկ հասակում թառամեց կուլտուրական, առաջադէմ այս երիտասարդը, որ իր ժամանակին փայլեց որպէս գրական-քննադատ: Իր հրապարակախօսական ձիրքով նա գրաւեց ոչ միայն ժամանակի լաւագոյն մտաւորականութեան, այլ եւ նոր սերնդի ուշադրութիւնը եւ շուտով վայելեց լայն ժողովրդականութիւն:

Նրա գրական-քննադատական լուրջ ուսումնասիրութիւնները այսօր գարդարում են Թիֆլիսի «Համբաւաբեր»ի էջերը, ուր առանձնապէս կենտրոնական տեղ է գրաւում Զօհրաբին նուիրուած յօդուածաշարքը:

Նա գրական դասախօսութիւնները քանդակուած են շատերի սրտերում:

Նրան յիշում են այսօր Ներսիսեան դպրոցի հազարաւոր սաները:

*

Դեռ 1926 թուին էր, երբ Երեւանի պետական թանգարանի պատմա-գրական բաժնում գիտական հսկիչի պաշտօնով աշխատելս՝ դասաւորեցի նրա անտիպ երկերը, որոնց մէջ կարդացի նրա գրական նուրբ ճաշակը եւ քննադատական ոգին: Որպէս քննադատ նա ապրեց իր ժամանակից բարձր եւ դարձաւ իր ժամանակաշրջանի լաւագոյն արտայայտիչը: Այդ ճանապարհին էլ նա ընկաւ:

*

Հողակոյտի վրայ գրուած է անտաշ, երկար մի քարակոյտ, որի վերեւի յղկուած ճակատին կարդում եմ.

ՄԱՄԲՐԷ ՄԱՏԷՈՍԵԱՆ

Քարն իր ամբողջութեամբ ընորոշում է երիտասարդ քննադատի քանդակող եւ կերտող ոգին:

ՍԵԴՐԱԿ ՄԱՆԴԻՆԵԱ

(1844 – 1915)

Ժամանակաշրջանի լաւագոյն այս մանկավարժն այսօր էլ դեռ ապրում է հարիւր հազարաւոր ուսանողների սրտերում: Նրա անունը սերտ կերպով արձանագրուած է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի պատմութեան: Նա գրաւում է նաեւ համեստ մի էջ 60—

70ական թուականների Մոսկուայի եւ Թիֆլիսի հայ թատրոնների պատմութեան մէջ: Սակայն նա ամենից շատ ապրեց եւ գործեց մանկավարժութեան դաշտի ներքոյ, նուիրեց մատաղ սերնդի դաստիարակութեան վեհ գործին. հանդիսացաւ իր ժամանակի մանկավարժական նոր ուղղութեան, նոր դպրոցի լաւագոյն արտայայտիչներից մէկը: Նրա կերտած մանկավարժական դասագրքերը եւ լեզուական ուսուցման մասին գրած յօդուածները մանկավարժական գրականութեան մէջ առանձնայատուկ տեղ են գրաւում: Այսօր էլ դեռ նրա մանկավարժական յօդուածներից շատերը կարդացւում են առանձին հետաքրքրութեամբ:

*

Ռաֆֆու շիրմի սահմանագծում հանդիսանում է այս մանկավարժը: Հողակոյտը ծածկում է մուգ-մոխրագոյն երկար եւ հատ քառակուսի կրանիտէ մի քար, որի երեսը ծածկուած սպիտակ մարմար քարի վերեւի ճակատում քանդակուած է սեւ գծերով մի խաչ, իսկ ներքեւում սեւ տառերով փորագրուած է.

ՍԵԴՐԱԿ
ՄԱՆԴԻՆԵԱՆ
* 4 ԱՊՐ. 1844 † 28 ՆՈՅԵՄԲ. 1915

ՆԿԱՐԻՉ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱԹԱՆԵԱՆ

(1824 – 1894)

Ահա անյայտ եւ մոռացած կուլտուրական մի նկարիչ-փորագրիչ, որն իր ժամանակաշրջանի նկարչական կուլտուրայի զարգացման գործում դրել է իր դրօշմը:

Ներսիսեան դպրոցը եւ Պետերբուրգի նկարչական ակադէմիան ահա գեղարուեստական այն հնոցը, ուր նա ստանում է նկարչական լուրջ կրթութիւն: Նրա նկարչական արուեստի վրայ զնում են իրենց դրօշմը Պրոֆ. Ուսկինը եւ Խարզանովը: Պետերբուրգի ակադէմիան էլ նա աւարտում է ոսկէ մէդալով: Դա այն չրջանն էր, երբ հայ իրականութիւնը չէր գնահատում արուեստը, մանաւանդ նկարչութիւնը: Եւ Քաթանեանն ստիպուած նուիրւում է նոր սերնդի նկարչական դաստիարակութեան գործին: Երկար տարիներ նա նկարչութեան եւ կալիգրաֆի (գեղագրութեան) դասեր է տալիս Թիֆլիսի առաջին եւ երկրորդ գիմնազիաներում: Նա առաջինն է հանդիսանում, որ նկարչութեան սէրը զարթեցնում է իգական սեռի մէջ: Բոլորովին ձրի նկարչութեան դասեր է տալիս օրիորդաց Գայիանեան դպրոցում: 1866 թուին տեսնում ենք նրան Թիֆլիսի հայ օրիորդաց Մարիամեան դպրոցում: Մի քանի տարի վարում է նաեւ Ներսիսեան դպրոցի աւագ վարակացուի պաշտօնը:

Նայեցէք «1863 թ. թատրոնական խումբը եւ դերակատարները» խմբանկարին, այնտեղ դուք կը տեսնէք նրա լուսանկարը: Դա ցոյց է տալիս, որ նա Թիֆլիսում դերակատարել է իր ժամանակի թատրոնի գեղարուեստական բաժինը: Այդ հանգամանքներն էլ բնորոշում են նրա հասարակական-կուլտուրական արժէքը եւ դերը:

Սակայն ի՞նչ ժանրի նկարիչ է Քաթանեանը, ի՞նչ է նկարել:

Բազմաթիւ կաւների վրայ վրձինել է նա իրական, հարազատ տեսարաններ, ինչ խորապէս զգացել է ու ապրել: Թողել է նաեւ գեղեցիկ փորագրութիւններ, որոնց մէջ զգացւում է հայկական արուեստի ոգին:

*

Ռաֆֆու յուշարձանի սահմանաշրջանում հանդիսանում է Քաթանեանը:

Մոխրագոյն-թուխ քառակուսի երկար կրանիտէ մի քար զարդարում է նրա հողակոյտը, որի երեսին կցուած սպիտակ մարմար քարի վերեւում քանդակուած է գծաւոր մի խաչ, իսկ ներքեւում մուգ-կարմիր գեղեցիկ տառերով փորագրուած է.

ՅՈՎՀԱՆՆԷՍ
ՔԱՔԱՑԵԱՆ
ՔԱԹԱՆԵԱՆՑ
1824—1894

ՆԿԱՐԻՉ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԵՐՍԻՍԵԱՆ

(1867—1884)

Կուլտուրական այս նկարիչն ապրել է եւ ստեղծագործել 19րդ դարի երկրորդ կիսում:

Էջմիածնի Ժառանգաւորաց դպրոցում կուլտուրական որոշ բովանդակութիւն ստանալուց յետոյ՝ մի քանի բարերարների նիւթական աջակցութեամբ մտնում է Պետերբուրգի Գեղարուեստական ձեմարանը, ուր ուսանում էր նաեւ յայտնի նկարիչ Այվազովսկին: Այդ դպրոցում, ժամանակի լաւագոյն ռուս նկարիչների ազդեցութեան տակ, Ներսիսեանը մշակում է իր նկարչական ստանձնայատկութիւնները: Բարձրագոյն կրթութիւն ստացած նկարիչը Պետերբուրգից անցնում է Շուշուայ դպրոցը ուսուցչի պաշ-

© National Library of Armenia

ոնով։ 40ական թուականներին նշանակում է Ներսիսեան դպրոցի նկարչութեան ուսուցիչ։ Այդ ժամանակաշրջանում էլ նա ամբողջապէս նուիրում է իր սիրած վրձինին եւ կաւին։

*

Ներսիսեանն ամբողջապէս նուիրում է պատմական նկարչութեան։ Վրձինում է գլխաւորապէս պատմական նկարներ եւ պորտրէտներ։ Առհասարակ պատմական ժանրում նա ամենաառաջին եւ միակ նկարիչն է։ Նրա վրձինին են պատկանում Ս. Սահակի, Ս. Մեսրոպի, Ներսէս Ե.ի նկարները։

Նկարչի տաղանդի մասին ժամանակի մամուլում արձանագրել են Սա. Նազարեանը, Պոչեանը եւ Ալ. Երիցեանը։ Այդ հանգամանքն էլ հաստատում է նրա նկարչական-կուլտուրական արժէքը։

*

1884 թուին Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում Ներսիսեանն ընդ միշտ փակեց իր աչքերը՝ յետին չքաւորութեան մէջ։ Մի քանի բարեբարների ծախքով կատարուեց նրա թաղումը...։

Խօջիվանքի գերեզմանատանը կայ մոռացուած եւ անյայտ մի հողակոյտ, որի վրայ ոչ քար կայ, ոչ էլ որեւէ արձանագրութիւն։ Դա նկարիչ Ներսիսեանի շիրիմն է։

90ական թուականներին Պերճ Պոչեանը «Տարազ»ի միջոցով կոչ արեց հայ նկարիչներին, մատենագիրներին եւ գեղագէտներին տապանաքար դնել նկարչի դամբարանի վրայ, բայց, դժբախտաբար, նրա կոչը չդտաւ արձագանք։

ՆԿԱՐԻՉ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԱՄՇԻՆԵԱՆ
(1856 1914)

Ցայտնի ժանրիստ եւ մանկավարժ։ Մանկութիւնն անցնում է Դաղստանի չքնաղ բնութեան ծոցում, ուր եւ սնւում է ապագայ նկարիչը։

Ուսանում է Թիֆլիսի գիմնազիայում եւ միաժամանակ նկարչութեան դասեր վերցնում «Կովկասեան արուեստը խրախուսող ընկերութեան» դպրոցում։ 1876 թուին մտնում է Պետերբուրգի Գեղարուեստական ճեմարանը, ուր աւարտելուց յետոյ մեկնում Պարիս՝ կատարելագործուելու իր արուեստի մէջ։

80ական թուականներին վերադառնալով Թիֆլիս, Ներսիսեան, Գայիանեան դպրոցներում եւ Յրդ Գիմնազիայում նկարչութեան դասեր է տալիս։ Նոյն շրջանում առանձին հմտութեամբ ու ճաշակով վրձինում է տեղական դանազան ազգութիւնների կեանքի բնորոշ մոմէնտները։ Դրանցից ուշագրաւ են. «Թիֆլիսի Շէյթան բազարը», «Ղէյնօբա» եւ «Օբա»։ Այդ նկարներում տեսնում ենք Անդրկովկասի ժողովուրդների սովորութիւնները, տիպերը եւ հագուստները։

*

Թաղուած է Խօջիվանքում, ուր հողակոյտի վրայ ոչ քար կայ, ոչ էլ որեւէ կոթող։

ՆԿԱՐԻՉ ՄԻՔԱՅԷԼ ԽՈՒՆՈՒՆՑ
(1883 – 1931)

Լաւագոյն գծագէտ-գրաֆիկ նկարիչ։ Գեղեցիկ եւ նուրբ վրձինով նկարազարդել է հայկական հէքեաթները։

Կիեւի ճարտարապետական ինստիտուտում մշակում է իր նկարչական բնածին յատկութիւնները։ Վերադառնալով Թիֆլիս, դանազան դպրոցներում տալիս է նկարչութեան դասեր եւ միաժամանակ նուիրում իր վրձինին։

*

Խօջիվանքում, Խունունցէնց գերեզմանաշրջանում, անպաճոյճ մի հողակոյտ՝ առանց քարի եւ արձանագրութեան։ Այդտեղ է թաղուած լաւագոյն գրաֆիկ նկարիչ Խունունցը։

ԾԵՐԵՆՑ
(1832—1888)

1879 թուին Թիֆլիսում լոյս տեսաւ մի պատմական վէպ. «Երկունք Թ. դարու»։ Պոլսոյ բարբառով գրուած, ժամանակաշրջանի ազգասիրական ձգտումներն ու տրամադրութիւնները դրսեւորող այդ վէպի հեղինակը Թիւրքահայ մի բժիշկ էր, որ Ներսիսեան դպրոցում դասաւանդում էր Հայոց պատմութիւն։ Դա Ծերենցն էր — Յովսէփ Շիշմանեանը։

«Թորոս Լեւոնի», «Երկունք» եւ «Թէոդորոս Ռշտունի» — ահա այն կոթողները, որ նա կերտեց։ Այդ պատմավէպերով էլ նա յայտնի դարձաւ։

*

Թիֆլիսի Խօջիվանքում, Բաֆֆու Գերեզմանի սահմանագծում, իր միակ դստեր՝ Թագուհի Մելիք-Ազարեանի շիրմի կողքին, կայ անպաճոյճ մի գերեզմանաքար։ Այդտեղ

է հանգչում Ծերենցը։ Թխագոյն, կէս մետր բարձր, երկար կրանիտէ քարի վրայ դրոշմուած է սպիտակ մի մարմար, որի վերեւ ճակատին քանդակուած է մի խաչ, իսկ ներքեւում փորագրուած է.

ԴՈԿՏՈՐ
ՅՈՎՍԷՓ ՇԻՇՄԱՆԵԱՆ
ԾԵՐԵՆՑ
ՎԱԽ. 17 ՓԵՏՐՎԱՐԻ 1888 ԱՄԻ
Ի ՀԱՍԱԿԻ 56 ԱՄԱՑ

ԱՇՈՒՂ-ՋԻՒԱՆԻ
(1846—1909)

Սայեաթ-Նովա, աշուղ-Շիրին եւ աշուղ-Ջիւանի — ահա աշուղական գրականութեան երեք սիւները, որոնք կերտեցին աշուղական նոր արուեստի ամենալաւագոյն էջերը եւ հանդիսացան աշուղական նոր շկոլայի դրօշակիրները։ Ահա թէ ինչու այդ աշուղներն այսօր առանձնայատուկ եւ ուրոյն տեղ են գրաւում աշուղական գրականութեան պատմութեան մէջ։

Ինքնուս, բնածին տաղանդ էր Ջիւանին, որը, սակայն, իր անմոռան ձիրքով խոշոր դեր կատարեց աշուղական գրականութեան մէջ։

Ինչո՞ւմն է կայանում նրա դերը։

Շիրինից յետոյ նա առաջին աշուղն է, որ երգեց ժամանակակից գրական լեզուով։ Նա գտեց, մաքրեց օտար բառերը գաւառաբարբառները եւ հիմք դրեց աշուղական նոր գրականութեան։

Սակայն Ջիւանին այդ յաղթականակով չի սահմանափակեց իր աշուղական գործունէութիւնը։

Նա էր, որ հիմնեց աշուղական ամենաառաջին դպրոցը, ուր աշուղական արուեստը ոչ միայն նոր փայլ ստացաւ, այլ եւ դրուեց գեղարուեստական բարձրութեան վրայ։ Այդ դպրոցումն էլ բազմաթիւ անտաղ աշուղներ մշակեցին եւ զարգացրին իրենց ընդունակութիւնները եւ ստացան աշուղական լուրջ կրթութիւն։

Բայց դրանով էլ կանգ չառաւ Ջիւանին։

Նա հիւսեց աշուղական անպաճոյճ, բայց նոր եւ գողտրիկ երգեր, որոնք շուտով դարձան հասարակ ժողովրդի, գիւղացիութեան, աշխատաւոր խաւերի սեփականութիւնը, անցան բերնից բերան, տարածուեցին ամենահեռաւոր, ամենախուլ անկիւնները եւ շուտով հռչակեցին աշուղի անունը։

Այսօր էլ դեռ հայաբնակ հեռաւոր գիւղերում հնչում են նրա երգերը։ Հարաւային Պարսկաստանի Սպահանի Փէրիա եւ Զարմահալ գաւառներն ուսումնասիրելիս, քանիցս լսել եմ գիւղացիների շրթերի վրայ նրա հիւսած «Զախորդ օրերը», «Խելքի աշեցէք», «Պաղ աղբիւրի մօտ», «Սեւ աչեր», «Քո փափաքով վառում եմ» երգերը։ Միթէ այդ հանգամանքը պերճախօս ապացոյց չէ՞ Ջիւանու լայն ժողովրդականութեան։ Եւ իրօք, Սայեաթ-Նովայից յետոյ դեռ ո՛չ մի աշուղ այնպիսի մեծ ժողովրդականութիւն չի վայելում, ոչ մի աշուղի երգերն այնպէս չեն տարածուած հասարակ ժողովրդի լայն խաւերում, ոչ մի աշուղի արուեստն այնպիսի պարզութեան եւ խորութեան չի հասած, ինչպէս Ջիւանու։

Ահա թէ ինչու նրա գրական պարզ լեզուով ու ոճով հիւսած երգերը երկար, շատ երկար պիտի հնչեն ժողովրդի շրթերի վրայ։

*

Ծերենցի եւ Յովհաննէս Թումանեանի շիրիմների մօտ հանգչում են Ջիւանու նշխարները։

Հողակոյտը ծածկում է մուգ-թխագոյն պարզ եւ անպաճոյճ մի քար, որի կէսը խրուել է հողի մէջ։ Քարի ճակատին կարդում եմ միայն երկու տող.

ԱՇՈՒՂ-ՋԻՒԱՆԻ
1846—1909

Ուռենու փոքրիկ ճիւղեր խոնարհուել են շիրմի վրայ, ասես սգում են ժողովրդական մեծ աշուղի կորուստը։

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ՀԸՑ-ԿԻՊՐՈՍ

Միջերկրական ծովու մէջ, Հայկական Կիլիկիայի դրեթէ դիմաց ցցուած է Կիպրոս կղզին։ Դրից մերձաւորութեամբ եղած է նաեւ Կիպրոսի քաղաքական եւ առեւտրական աղերսը հայ Կիլիկիայի հետ սերտ։ Դարերէ ի վեր Կիպրոս հիւրընկալն եղած է բազմաթիւ հայերու. եւ այսօր իսկ կ՚ապրի հոն մեծ թիւ մը հայութեան։

Պարագաները կը յորդորեն վեր հանել մանրախոյզ քննութեամբ ոչ միայն կղզւոյն

© National Library of Armenia